

Մ Ի Ք Ա Ն Ի Բ Ա Ռ Ե Ր

Գրեց՝ Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Իր «Դաստիարակութիւնը հին հայոց քով» գրքի մէջ (էջ 282-3) Հ. Վ. Հացունի խօսք է անում մի խաղի մասին, որ կոչւում է Կոզոփոց: «Ձայնով ու կազմով դժուարին բառ» է ներկում հեղինակին այս խօսքը: Նրան թւում է, որ այս բառի մէջ կայ կոզոփ արմատը, որ Ս. Գրքի մէջ (Բ. Օրինաց, ԻԶ. 2, 4) նշանակում է կոզոփ: Անհնարին չի թւում նրան, որ այդ բառը բնիկ հայերէն լինի կամ գրչի աղաւաղում: Իսկ եթէ ո՛չ մէկն է եւ ո՛չ միւսը՝ ապա նա յիշեցնում է յունարէն kolofon բառը, որ նշանակում է նաեւ «գնդակ կամ օղալից գունդ» եւ աղաւաղութիւն հայի բերանում նախ քան գրերի գլխով՝ այդ ձևով էլ գրի վ առնւած: Ուղեբեւեռնի թարգմանիչը այդ բառը դրել է յունարէն kephale բառի դէմ, որ գլուխ է նշանակում: Հեղինակը համոզուած է, որ այդ խաղը հայերի մէջ կար. եւ եթէ հայ թարգմանիչը կոլոփոս բառն է դրել կոզոփոցի ձևով, պատճառն այն է, որ այդ աղաւաղ ձևն աւելի բնական էր հայ ընթերցողին: Հեղինակն աւելի հակուած է կարծելու, որ կոզոփոցը յուն. կոլոփոս բառն է աղաւաղ տառադարձութիւն եւ նշանակում է գնդակ կամ օղալից գունդ:

Թէ ինչու հեղինակը «ձայնով ու կազմով դժուարին» բառ է համարում կոզոփոցը եւ յուն. կոլոփոս բառի «քիչ մ'աղաւաղը»՝ դժուար է ասել: «Ձայնով դժուարին», երեւի ուղղում է ասել, որ այդ բառի հնչումը դժուար է կամ տեղի(?). կարծում եմ, ոչ աւելի դժուարին քան խոլխոլի, մխրմխ եւ նման բառերը: Ի՞նչն է նրա կազմի դժուարութիւնը. չգիտեմ: Նա նման է մեր օրոցի, չարոցի եւ նման բառերին եւ կարող է արոհուել իր կոզոփոց-ի: Իր բուն ուրեմն կոզոփ է, որ հարազատ հայերէն տառադարձութիւն ունի, ուր յուն. 1 դարձած է ղ, ինչպէս Պօղոս բառի մէջ եւ յուն. փ դարձած է փ, ինչպէս փրիստիայ բառի մէջ: Այսպիսով ոչ ձայնի եւ կազմի դժուարութիւն կայ, ոչ աղաւաղ տառադարձութիւն:

Ճիշդ է, որ կոզոփոց բառի մէջ կայ կոզոփ արմատը, որ կոզոփ է նշանակում: Հեղինակին չի թեցնում է անշուշտ այն հանգամանքը, որ դժուար է ասել թէ ի՞նչ կապ կարող է ունենալ մի խաղ, որ կոչւում է «Կեֆալէ», ախիքն՝ գլուխ, մի բառի հետ, որի արմատը կոզոփ է նշանակում. ի՞նչ կապ կարող է լինել մարդու գլխի եւ կոզոփի միջեւ: Այս կապը չգտնելու համար է, որ հեղինակը «կոզոփոց» բառի մէջ գտնելով «կոզոփ», որ է կոզոփ՝ այդ «յարմարութիւնը» համարում է «միայն արտաքին», մանաւանդ որ յոյների մէջ կոզոփի հետ կապուած որեւէ խաղի նա չի հանդիպած:

Տեսնենք այդ կապը պատահական է արդեօք եւ առհասարակ որեւէ կապ կա՞յ այդ երկու տարբեր բառերի միջեւ:

Կոզոփոց բառի բուն տեսանք որ կոզոփ է: Այս բառը մինչեւ այսօր գործ են ածում մեր բարբառներում կոլոփ, կոլոպ եւ կոռոփ ձևերով: «Կոլոփը թքեց», ասում է Կարնեցին. «կոլոփը թուք», ասում է Շապին-Գարահիտարցին: Կոռոփ նշանակում է գոմչի կուրի մեծ գունդ. գոմչի մեծ կուռնուն ասում են կոռոփել. ձիւթի, մոմի, թուքի գունդին ասում են կոռոփ. մի կոռոփ ցելս — նշանակում է մի գունդ ցելս. մի կոռոփ խիսեց — նշանակում է մի գունդ թանձր թքեց. խիսելը խուլս բառից է, որ նշանակում է մրած մարդու թանձր թուք (Ս. Վ. Ամատունի. Հայոց բառ ու բան, էջ 360): Կոռոփ — թրիք գոմչոյ, ըստ տմանց եւ խուլս մեծ կարելի է կարողալ Հայկազ. Բառգրքի Յաւելուածի մէջ: Այս բոլոր օրինակները ցոյց են տալիս, որ կոլոփը, կոլոպը, կոռոփը եւ հին կոզոփը նոյն բառերն են եւ նշանակում են գունդ: Գալով այս բառերի ձևին՝ պարզ է որ կոլոպ ու կոլոփ նոյն են, ինչպէս նաեւ կոզոփ ու կոլոփ, նկատելով, որ պ-ն ու փ-ը եւ լ-ն ու դ-ը լծորդ ձայներ են: Ինչ պե-րաբերում է կոռոփ ձևին, պէտք է նկատել, որ ո-ն թանձր կամ զոյգ ր է, իսկ ր եւ լ լծորդ ձայներ են, ինչպէս օրինակ այս ձևերում: